տէհ ժամանակ բացեալ են զայն առանց հրամանի, եւ ՚ի պատճառս ճանապարհին այնորիկ յարուցին բազմադիմի խռովութիւնս ընդ Հայս, և ՚ի միում նուագի վիրաւորեցին զվարդապետս, և ՚ի դատաստանին առաջի Կուսակալին Դամասկոսի, Դատաւորին և այլազգեաց երեսաղէմի՝ ոչ կարացին մատուցանել դէր վասն այնր. և համարեալ զայն նորասահման ինչ փակեցաւ օրինօք դատարանի, և ըստ մտաց Հէօճճէթին եւ հրովարտակ արքունուստ եւ վաւերեալ զայն Փոխարքային Եգիպտոսի՝ հրամայեաց ընդդործադրութիւն նորին։

7՝.—Շինութիւնք և նորոգութիւնք Համբարձման տեղւոյն յատկացեալ են Հայոց, և Մահմուտ Արքայ տեսեալ զհրովարտակն ՌՁԳ թուին, հրամայեաց նորոգել զայն, եւ ապա ետ հրովարտակ շինութեան և նորոգութեան, պատարագի և եկեղեցական զարդուց. և վասն սեփհականութեան տեղւոյն ունիմք զհին հրամանս։

8՝.—Գողգոթայն տեղի Մաչելութեան Քրիստոսի՝ սեփհական էր և ժառանգութիւն Հայոց ազգին, որպէս հաստատեն զայս դաշնագիրք եւ հրովարտակք Սուլթանաց Եգիպտոսի, իսկ ազգն Վրաց նենգութեամբ յափշտակեաց զայն ՚ի ձեռաց Հայոց. եւ եղեւ բազմադիմի վէճ եւ դատաստան ՚ի մէջ երկուց ազգաց, և ՚ի վերջոյ հաստատեցաւ իրաւունք Հայոց, և եղաւ պայման ՚ի միջի՝ զի ՚ի հակառակիլ վերստին Վրաց՝ անկցին ընդ տուգանօք։ Սակայն Վիրք անսաստեալ հրամանին և զօրութեամբ Թագաւորի իւրեանց՝ վերստին գրաւեցին զայն տեղի, եւ զկնի ժամանակաց յափշտակեցին Լատինք զմի մասն ՚ի ձեռաց նոցա. և անհետանալ Վրաց յերուսաղէմ՝ Յոյնք տիրեցին Գողգոթային. այլ բնականապէս ամբողջ Գողգոթայն է Հայոց. Յոյնք և Լատինք չունին անդ իրաւունս, այժմ պահանջեմք զայն. զի յաւուրս արդարութեան իշխանին մերոյ լիցի արդարութիւն և իրաւունք։

9՝.—Այրն Քառասնից, որ և կոչի Այր Կոչն, արտաքոյ դիւղին Բեթղեհէմի, որում բաժանորդ էին երեք ազգք և ՚ի թուին ՌՂՀ եղին անդ Լատինք զսպասս եկեղեցւոյ, և սահմանեցին նոր դուռն, և Դատաւորն յետ քննութեան ետ բառնալ զայնս և ելից զդուռն, թողեալ